ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ՀԱՒՈՒՑ ԹԱՌ
ԿԱՄ
ԱՄԵՆԱՓՐԿԻՉ

ՏԵՂԱԴՐԱԿԱՆ. — Հաւուց (երբեմն գլբուած Հայոց) Թառ Վանքը կը գտնուի Այրարատ նահանգի Դարոնի կամ Մագազ գաւառին մէջ, Հաւուց Թառ գիւղին մօտ։ Ունէր հինգ եկեղեցիներ, Ս. Կաթողիկէ, Ս. Ամենափրկիչ, Ս. Կարապետ, Ս. Առաքելածին և Ս. Յարութիւն. — Այրարատ, էջ 354։ Յովսէփեանց, Հաւուց Թառ, Երուսաղէմ, 1937, էջ 25, 30։

ՊԱՏՄԱԿԱՆ. — Մխիթար Այրիվանեցիի համաձայն, ժԱ. դարու սկիզբը (1001–1010) «Գէորգ իշխան Քեզուոյս շինած է Հաւուց Թառ Վանքը. — Պատմ., էջ 57։

Իսկ հին արձանագրութիւն մը կը տեղեկացնէ թէ, 1013 թուին Գրիգոր Մագիստրոս վերստին շինած է Հաւուց Թառի Ամենափրկիչ կոչուած եկեղեցին. — Յովսէփեանց, Հաւուց Թառ, էջ 2։

Մինչև յաջորդ դարու երկրորդ կէսը սակայն չկան պատմական յիշատակութիւններ այս վանքի մասին։

Ցիշեալ շրջանին, Յովսէփ՝ վկայ, նահատակուած Դուինի մէջ 1170 թուին, կը բերուի և կը թաղուի հոս, Զաւախի որդի Սարգիսի ձեռքով. — Հաւուց Թառ, 18։

Յաջորդ դարուն հետ կը սկսի յիշատակութիւնը Հաւուց Թառի վանահայրերուն, որոնց գաւազանը, աւելի կամ պակաս ընդհատներով, կը կազմուի այսպէս.

1. — Պօղոս Վարդապետ, 1214. — Այս ժամանակ Վանքին մէջ նշանաւոր էր Եղիա Վարդապետ, որ աւելի կանուխ (1208ին) մասնակցած էր Լօռիի հաւաքոյթին։ Սա Հաւուց Թառի մէջ կանոն դրած էր որ ժամապաշտութեան պահուն ամէնքը միաբերան երգեն, ցած կամ բարձր, և գիրքը չհարստահարեն. — Կիրակոս, էջ 84։ Սգ. գապատում, էջ 1576–7։ Ցիշտ. Ձեռ., թ. 343։

2. — Մխիթար Եպիսկոպոս, 1284–96։ Ինքն ալ ստորագրած է Ստ. Օրբէլեանի ձեռնարկը Գր. Անաւարզեցիի դէմ, 1296ին. — Օրբէլեան, Բ., էջ 209։ Հաւուց Թառ, 24։

3. — Տէր Յովսեփ Առաջնորդ, 1297?–1321։ Իր շրջանին, Տիրատուրի որդի Կարապետ և ամուսինը՝ Ծաուկան կը շինեն Ս. Կարապետի անուան փոքր եկեղեցին. — Հ. Թառ, 25։

4. — Տէր Աբրահամ, 1350. — Հ. Թառ, 26

5. — Զաքարիա Արքեպիսկոպոս, 1428–43. — Մասնակցած է Վաղարշապատի ժողովին, 1441 թուին, և գրիչն դեր կատարած է Կիրակոս Վիրապեցիի ընտրութեան և պաշտօնանկութեան մէջ. — Սգ. գապատում, էջ 2106, 2121։ Հ. Թառ, 30։ Խաչիկեան, Ցիշտ. ժԵ. Դարի, Մասն Ա., թ. 316։

6. — Յովհաննէս Եպիսկոպոս, 1465–87. — Նստարք, էջ 221։ Այրարատ, էջ 357։

7. — Զաքարիա Եպիսկոպոս, 1487 թուին գնած է վանքին մօտակայ ինը գիւղեր, և ետքը վաւերացնել տուած է Շահ Իսմայէլին (1499–1525) յատուկ հրովարտակով. — Այրարատ, էջ 357։ Հ. Թառ, 31։

8. — Նաթանայէլ Եպիսկոպոս, 1510?. — Հ. Թառ, էջ 22, 31։ Ցիշտ. Ձեռ., էջ 663։

9. — Համազասպ Առաջնորդ, 1530?. — Հ. Թառ, 31։

10. — Զաքարիա Առաջնորդ, 1570?. — Նոյն, անդ։

11. — Սահակ Եպիսկոպոս, 1602. — Հ. Թառ, 32։

12. — Մանուէլ Եպիսկոպոս, + 1605. — Նոյն, անդ։

Ինչ որ այստեղ ցոյց տուաւ Հայում, պիտի եզրակացնէ մեր իմաստասէրը, նորոգելու համար էր միայն հին դժուարութիւն մը, ցցուած՝ Աստուծոյ ոչ Ս. Գրական ըմբռնումին դիմաց, անտեսելու համար Ս. Գրական իմաստասէրներու տեսակէտները թէ այս դժուարութիւնը չի կրնար յարուցուիլ իրենց մասին ունեցած Ս. Գրական ըմբռնումին դէմ։

Թրգմ. Վ. Ա. Գ. H. A. WOLFSON
եւ Ա. Ս. Պ. Harvard University

(Մնացեալը յաջորդիւ՝ 5)

digitised by A.R.A.R.@

13. — Համազասպ Եպիսկոպոս, 1606?–1619, *սայր խրոխտ և ճարտարարան.* — *Ա. Դաւրիժեցի*, 1896, էջ 298։ *Այրարատ*, էջ 357։ *Հ. Թառ.*, 32։

Իր օրով, 1618ին, *Մեսրոպ Դպիր Խլզանցի վիրատին կազմած է Իգնատիոս Գրիչի* 1214ին *օրինակած մեծարժէք Աւետարանը.* — S. Der Nersessian, Man. Arm. Illustrés, Paris, 1937, p. 174:

14. — *Մկրտիչ Եպիսկոպոս*, 1629. — *Այրարատ*, 357։ *Հ. Թառ.*, 32։

15. — *Սիմեոն Վրդ. Ջուղայեցի*, 1648?–+ 1657. — *Աշակերտ Փիլիպպոս Կաթողիկոսի։ Գրած է դրուատական ոտանաւոր մը Հաւուց Թառի մասին.* — *Հ. Թառ.*, էջ 32, 97։ *Դաւրիժեցի*, էջ 405–7։

16. — *Յովհաննես Եպիսկոպոս*, 1658. — *Հ. Թառ.*, 33։

17. — *Մատթէոս Վրդ. Ջուղայեցի, որդի Գրիգորի*, 1658–73. — *Ջամբռ.*, էջ 279։ *Այրարատ*, 357։ *Հ. Թառ.*, 33։

18. — *Մարկոս Վրդ. Ջուղայեցի*, 1679. — *Այդ թուականի Յունիս 4ին մեծ երկրաշարժ մը կ'աւերէ Այրարատեան երկիրը, կը ՀԷաստուի նաև Հաւուց Թառ Վանքը.* — *Հ. Թառ.*, 33։

19. — *Ստեփանոս Վարդապետ*, 1696?–1707?. — *Այրարատ*, 357։ *Հ. Թառ.*, 33։

20. — *Մաղաքիա Վարդապետ*, 1708–45. — *Իր առաջնորդութեան շրջանին*, 1721ին, *Աստուածատուր Կաթողիկոս կը ձեռնարկէ երկրաշարժէն քանդուածներուն տեղ նոր եկեղեցիի մը շինութեան, բայց Լեզգիներու արշաւանքին պատճառով կը ստիպուի կիսատ թողուլ և փախչիլ.* — *Այրարատ*, 357։ *Ջամբռ.*, 279։ *Հ. Թառ.*, 33։

21. — *Յովհաննես Վարդապետ*, 1745 — *Ջամբռ.*, 279։ *Հ. Թառ.*, 34։

22. — *Ազարիա Վարդապետ*, 1745–55. — *Լեզգիներու երկրորդ արշաւանքի ընթացքին* (1755) *Վանքը բոլորովին կ'անշքանայ և կ'աւերուի. իսկ Ամենափրկիչ կոչուած սրբութիւնը կը փոխադրուի Էջմիածին.* — *Ջամբռ.*, 279–80։ *Հ. Թառ.*, 34։

ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ. — *Հաւուց Թառը թաքուր չէ եղած մշակութային գործիչներէ, որոնց արդիւնքներէն քիչ բան մը միայն մնացած է դժբախտաբար։ Ծանօթ են հետեւեալները.*

Ա. — *Իգնատիոս Նշ. Գրիչ եւ Մանրանկարիչ*, 1214ին *օրինակած և նկարազարդած է Աւետարան մը, թագէոս Քահանայի պատուէրով, որ նուիրած է զայն Հաւուց Թառ ուխտին.* — *Ցիշտ. Ձեռ.*, *Թ.* 343։ S. Der Nersessian, Man. Arm. Illustrés, Paris, 1937, p. 4, 172–4:

Բ. — *Գրիգոր Գրիչ*, 1297–8, *որդի Մխիթարիչի և Մամխաթունի, աշակերտ Աբրահամի. օրինակած է,*

1. — *Աւետարան*, 1297ին, *որուն սաստղներն են եղած Քուրթ և իր ամուսինը՝ Ապէր.* — *Հ. Թառ.*, էջ 24, 90։

2. — *Պատմագրաան*, 1298ին, *Սարգիս կուսակրօն քահանայի խնդրանքով.* — *Հ. Թառ.*, էջ 24–5, 91։

Գ. — *Սարգիս Քահանայ, թուղթ պատրաստող*, 1423ին *օրինակուած Մաշտոցին թուղթը պատրաստած է.* — *Ցիշտ. ժե. Դարի, Մասն Ա.*, *Թ.* 316։

Դ. — *Դաւիթ Քահանայ, Գրիչ, որդի Վարդանայ*, 1423ին *աւարտած է օրինակութիւնը Մաշտոցի մը, և ընծայած է Հաւուց Թառի եկեղեցիին.* — *Նոյն. անդ.*

Ե. — *Ստեփանոս Արեղայ, Գրիչ*, 1458–71, *որդի Յովհաննէսի և Էմինի. օրինակած է,*

1. — *Շարակնոց*, 1458ին, *բոլորգիր, Խլկեցի օրինակէ, Յովհաննէս Արեղայի համար.* — *Ցիշտ. ժե. Դարի, Մասն Բ.*, *Թ.* 134։ *Ձեռ. Ս. Ց.*, *Թ.* 1635։

2. — *Ճաշոց*, 1464ին, *իր պատանեկութեան ընկեր Դանիէլ Վարդապետի խնդրանքով։ Կազմած է Յակոբ Քահանայ.* — *Հ. Թառ.*, էջ 30, 92–3։ *Ցիշտ. ժե. Դարի, Մասն Բ.*, *Թ.* 258։

Գրչի յիշատակարանէն կը տեղեկանանք թէ այդ միջոցին Վանքին մէջ կը գտնուէին տասնեակ մը հոգեւոր աշակերտներ՝ կուսակրօն քահանաներ։

Ժամանակակից ուրիշ գրող մը, Մանուէլ Եպս. Ազիզբէկեան, Ամենափրկչին նուիրած իր Դանձին մէջ, Հաւուց Թառի դպրանոցը չափազանց գովեստով կը յիշէ «համալսարան». — *Հ. Թառ.*, էջ 3, 89։ *Այրարատ*, 198։

3. — *Աւետարան*, 1471ին, *իր ծնողաց յիշատակին.* — *Ցիշտ. ժե. Դարի, Մասն Բ.*, *Թ.* 395։

digitised by A.R.A.R.@

4. — Աւետարան, 1471ին, թղթագրող. — Ցիշ. ժե. Դարի, Մասն Բ., Թ. 396։ Հ. Թառ., էջ 31, 93։

Զ. — Գրիգոր Կրօնաւոր, Գրիչ, 1543ին աւարտած է օրինակութիւնը մէկ ժողովածուի. — Հ. Թառ., էջ 31, 93-4։

Է. — Խաչատուր Քհն. Երեւանցի, Ծաղկող, 1628ին ծաղկած է Ազարիա Գրչի օրինակած ժամագիրք-Սաղմոսը. — Հ. Թառ., 32։

ԽՈՐԱՆԱՇԱՏ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Խորանաշատ Վանքը կը գտնուէր Արցախ Նահանգի Փառիսոս գաւառին մէջ Ղուլայի գիւղին արեւելեան կողմը. — Բարխուտարեանց, Արցախ, էջ 322։

ՊԱՏՄԱԿԱՆ. — Խորանաշատ Վանքը շինուած է Վանական Վարդապետի ջանքերով, 1216-1222 թուականներուն։ Վանքը այդ անունը ստացած է, որովհետեւ կը պարունակէր բազմաթիւ մատուռներ, ե գլխաւոր եկեղեցին, Սուրբ Աստուածածին, ունէր չատ մը խորաններ. — Կիրակոս, Վենետիկ, 1865, էջ 199։ Արցախ, էջ 323։

Խորանաշատ Վանքի առաջնորդներէն ծանօթ են հետեւեալները.

1. — Վանական Վարդապետ, 1216-51. — Շինող և Առաջնորդ Խորանաշատ Վանքին։ Կը վախճանի 1251 Մարտ 18ին և կը թաղուի, ըստ իր փափաքին, աղքատաց գերեզմանատան մէջ. — Կիր., էջ 199-200։

Վանական Վարդապետ եղած է համբաւաւոր ուսուցիչ մը։ Իր աշակերտներուն մէջ նշանաւոր հանդիսացան, Վարդան Արևելցի, Կիրակոս Գանձակեցի, Առաքել Վարդապետ, Յովսէփ Վարդապետ, Գրիգորիս Վարդապետ, Ստեփանոս Աղթամարցի, Տէր Իսրայէլ և Պօղոս Քահանայ։

Խաղբակեան Ջալուռ իշխանին դուստրը՝ Վանենի, Խորանաշատի Ս. Աստուածածնին կը միաբանակցի, 1224 թուականին, նուիրելով Աւետարան մը. — Յովսէփեան, Խաղբակեանք, Գ., էջ 91։ Ցիշ. Ձեռագրաց, էջ 839։

2. — Պօղոս Քահանայ, 1251ին կը յաջողէ իր հօրեղբօր՝ Վանական Վարդապետին։ Իր առաջնորդութեան շրջանին վարդապետական ուսման գլխաւոր կը կարգուի, Վանականի աշակերտ և ազգական, Գրիգորիս Վարդապետ. — Կիր., էջ 200։

3. — Պետրոս Վարդապետ, 1283. — Ոսկեան, Արցախի Վանքերը, էջ 156-7։

Ապա երկար ընդմիջում մը, որմէ ետք դարձեալ կ'երևին քանի մը անուններ, այսպէս.

4. — Տէր Բարսեղ Արքեպիսկոպոս, 1639-66. — Ոսկեան, էջ 158։ Բարխուտարեանց, Ազուանից Երկիր, էջ 176։

5. — Յովհաննէս Արքեպիսկոպոս, 1668. — Ոսկեան, էջ 159։

6. — Գրիգոր Արքեպիսկոպոս, 1669. — Նոյն, անդ։

7. — Յովհաննէս Եպիսկոպոս, 1683. — Արցախ, էջ 328։

8. — Իսրայէլ Արքեպիսկոպոս, 1764. — Ոսկեան, էջ 70։

ՄԵՇԱԿՈՒԹԱՑԻՆ. — Խորանաշատ Վանքի գրչագրական գործունէութենէն քիչ բան ծանօթ է. կան հետեւեալները.

Ա. — Ստեփան Աղթամարցի, Գրիչ, որդի Յովհաննէսի. 1223ին օրինակած է Խորանաշատի մէջ,

1. — Գիրք Առաքելաց, Գր. Աստուածաբանի. — Նոզակաթ. էջ 199։ Ցիշ. Ձեռ., էջ 827-8։

2. — Ցարագ Աստուծոյ, Արիստոտէլի. — Քննթ. Գրոց Դ. Անյաղթի, Կոնիբիր, Քրգմ. Տաշեան, էջ 72-92։

3. — Ցաղագս բան ունել եւ անասուն կենդանեաց, Փիլոնի. — Կարինեան, Ցուցակ, Թ. 2050։

Բ. — Գրիգոր Գրիչ, 1252ին օրինակած է Ժողովածու մը, Բարիրոյի Ստեփանոս Քահանայի համար. — Ոսկեան, էջ 155-6։

Գ. — Մարտիրոս Գրիչ, 1283ին օրինակած է Նարեկ մը. — Նոզակաթ, էջ 205։

Դ. — Եսայի Գրիչ, 1630?-1639. — Օրինակած է յաջորդաբար,

1. — Սաղմոսարան, 1630?ին. — Ոսկեան, էջ 157։

2. — Ժողովածու, 1637ին, Աստուածաշունչ Քահանայի համար. — Նոյն, անդ։

3. — Աւետարան, 1639ին, Թումա Կրօնաւորի համար. — Նոյն, էջ 157-8։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@